# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Ջերմուկ** **20/հունիս/2024 թ.**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ....9.... անդամներ:

Բացակա էին՝ Ա. Մնացականյանը, Մ. Հովսեփյանը, Ձ. Բաբայանը, Յ. Արսենյանը, Մ. Այվազյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը և առաջատար մասնագետ Ա. Հայրապետյանը, գլխավոր մասնագետ Ա. Գառնիկյանը, առաջատար մասնագետ Մ. Մարգարյանը:

**Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Սարգսյանը**

**Նիստը արձանագրում էր Ջերմուկ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը**

**Լսեցին**

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ)***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական՝ 2024 թվականի հունիսի 20–ի նիստի հետևյալ ***օրակարգը***՝

1.1. Ջերմուկ համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (ՄԺԾԾ) հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերի ժամկետները երկարաձգելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.3. Ջերմուկ համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. Համայնքային սեփականության գույքը՝ քաղաքային այգու տարածքում տեղադրված առևտրի տաղավարները, օգտագործման տրամադրելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Ա. Հայրապետյան*

1.5. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ա. Գառնիկյան*

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 23-ի N 30-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.7. Դրամական օգնություն տրամադրելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Մարգարյան*

1.8. Ջերմուկ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----7---- Դեմ----1---- Ձեռնպահ----0----

Ա. Հովհաննիսյան, Ա. Ավետիսյան՝ չի մասնակցել

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ա/

**Լսեցին**

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻ***

***(ԶԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)***

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1–ին հոդվածին համապատասխան՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ--------7---- Դեմ----------1---------- Ձեռնպահ----------0----------

Ա. Հովհաննիսյան

Ա. Ավետիսյան՝ չի քվեարկել

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ա/

**Լսեցին**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով՝

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի N 4/4 և Ազատամարտիկների փողոցի N 17/1 հասցեներում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 6–ական քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման ժամկետը երկարաձգել 5 (հինգ) տարով՝ մինչև 2030 թվականը՝ անփոփոխ թողնելով Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 20-ի «Ջերմուկ համայնքի

սեփականություն համարվող հողամասերը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վճարի չափը և պայմանները հաստատելու, Ջերմուկ համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 29-ի N 13-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 38-Ա որոշմամբ սահմանված բոլոր պայմանները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---- Դեմ----0---- Ձեռնպահ----1----

Ա. Հովսեփյան
Ա. Ավետիսյան՝ չի քվեարկել

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ա/

**Լսեցին**

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝

1. Համաձայնություն տալ 2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Ջերմուկ համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների (Ձև 22 և Ձև 22ա):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---- Դեմ----1---- Ձեռնպահ----0----

Ա. Հովսեփյան
Ա. Ավետիսյան՝ չի քվեարկել

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Լ/

**Լսեցին**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ՝ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԸ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ ՀՀ կառավարության ու Համաշխարհային բանկի համաֆինանսավորմամբ Հայաստանի Տարածքային զարգացման Հիմնադրամի կողմից իրականացված «Ըմպելասրահի ճեմուղիների և շուկայի բարեկարգում» ծրագրի շրջանակներում ձեռք բերված և Ջերմուկ համայնքին տրամադրված գույքը՝ առևտրի տաղավարները, տրամադրել օգտագործման՝ քաղաքային այգու տարածքում բացօթյա առևտրի կազմակերպման նպատակով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքը մինչև 2025 թվականի հունիս ամիսը ներառյալ տրամադրել անհատույց օգտագործման իրավունքով, իսկ 2025 թվականի հուլիսի 1-ից՝ ամսական 7000 դրամի չափով օգտագործման վճարով:

3. Իրավունք վերապահել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ գույքի օգտագործման պայմանագիր կնքելու դրանք սույն որոշման 1-ին կետում նշված նպատակով օգտագործելու նպատակով դիմած քաղաքացիներին՝ լիազորելով նրան գույքի օգտագործման ժամկետը սահմանել երկկողմ համաձայնությամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*------7------ *Դեմ*------1------ *Ձեռնպահ*------0------

Ա. Հովսեփյան Ա. Ավետիսյան՝ չի մասնակցել

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

**Լսեցին**

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)***

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 20-րդ փողոցի N 10 հասցեում գտնվող 110-016-0011-0022 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 24052024-10-0013) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,0375 հա) բնակելի տուն կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 300000 (երեք հարյուր հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------7---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------1----------

Ա. Հովսեփյան

Ա. Ավետիսյան չի քվեարկել

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

**Լսեցին**

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 23-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 30-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 1-ին և 3-րդ կետերում «Գագիկ Արտուշի» բառերը փոխարինել «Արթուր Գագիկի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ----------7---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------0----------

Ա. Հովսեփյան - չի քվեարկել

Ա. Ավետիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Ա/

**Լսեցին**

***ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ՄՈՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 52-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2024 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից 300 000-ական (երեք հարյուր հազարական) դրամ ֆինանսական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի բնակիչներ Արմեն Վրույրի

Խաչատրյանին և Յուրիկ Պարույրի Հակոբյանին, 100000 (հարյուր հազար) դրամ՝ Իշխան Մարգարի Ասատրյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*-----9----- *Դեմ*----------0--- *Ձեռնպահ*----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ա/

**Լսեցին**

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի սեպտեմբերի 19-ին, ժամը՝ 15.00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Կողմ*-----9----- *Դեմ*----0------ *Ձեռնպահ*----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ա/

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | ստորագրություն |
|---|---|
| Արսենյան Վահագն Աշոտի | բացակա |
| Սարգսյան Վարդան Ռաֆիկի | |
| Սարգսյան Լուսիկ Ժորայի | |
| Վարդազարյան Աննա Վասակի | |
| Խաչատրյան Գոհար Բաբկենի | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա |
| Այվազյան Մխիթար Վոլոդյայի | բացակա |

| | |
|---|---|
| Մկրտչյան Մարինե Մայիսի | |
| Բաբայան Ժիրայր Ժորայի | բացակա |
| Մնացականյան Արկադի Ալբերտի | բացակա |
| Գևորգյան Մանան Աղվանի | |
| Վահանյան Վարուժան Կնյազի | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | |
| Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի | |

*Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝*

Վարդան Սարգսյան _____

*Նիստն արձանագրեց՝* Գոհար Թադևոսյանը՝ _____